Կ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՑ ԴԱՐՁԱԾ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ ԵՒ ՆՐԱՆՑ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՑ ՑԵՂԱԿԻՑ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ

Ինչպէս ասացի, Ուտիացոց աշխարհում բազմաթիւ Հայոց գիւղեր և գիւղաքաղաքներ Մահմեդական կրօնն ընդունեցին մեզանից ուղիղ 152 տարի առաջ՝ հարկաւ, արիւնարբու լեռնականների և պարսկական բարբարոս խաների անպաշտպան Հայ քրիստոնեաներին հասցրած սոսկալի տանջանքներից ու անվերջ հալածանքներից ստիպուած։

Մահմէդի կրօնամոլ զաւակները քարուքանդ արին տեղ-տեղ Ուտիացոց երկրի քրիստոնէական եկեղեցիներն ու սրբավայրերը, որպէսզի նորադարձ Հայ մահմեդականները մնան առանց եկեղեցու, աղօթատան և քահանայի, և ապա անճարացած՝ շուտով ընտելանան նրանց լեզուի ու կրօնի, վարք ու բարքի, նիստ ու կացի և սովորութիւնների հետ։ Ահա այսպէս, Մահմէդի կրօնամոլ և մարդակեր ներկայացուցիչները ամեն հնարք և ջանք գործ դրին քրիստոնէութեան հետքերը բոլորովին ջնջելու, որ նորադարձ Հայ մահմեդականները կարելւոյն չափ շուտով ձուլուին իրենց հետ առ միշտ։

Բայց քաջարի և անվեհեր Ուտիացի Հայե-